ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Լեվան ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/12 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Ղեկավարի բազկաթոռը պետք է լինի շարժական, հոլովակավոր՝ հինգ անվակների վրա, որոնք միմյանց պետք է կապակցված լինեն հինգ թևանի երկաթե խաչուկով: Անիվների միացման կապակցող դետալները պետք է լինեն մետաղից, անիվները՝ ռետինե և երեսպատված՝ փայտե դետալների համադրմամբ: Բազկաթոռը պետք է ունենա փայտե հիմք, որը պետք է պաստառապատված լինի սև կաշվով: Արմնկակալները պետք է լինեն փայտից, բարձրությունը նստատեղից՝ 20-25սմ: Բազկաթոռի մեջքը և նստատեղը պետք է պատրաստված լինեն մեկ ամբողջական նրբատախտակից: Թիկնակը և նստատեղը պետք է պատված լինեն խիտ, փափուկ սպունգով՝ 8-10սմ հաստությամբ: Բազկաթոռը պետք է լինի պտտվող, նստատեղը ունենա բարձրացնելու, իջեցնելու, կարգավորվող ճոճման հնարավորություն: Նստատեղի խորությունը պետք է լինի 50-55սմ, իսկ լայնությունը 55-60սմ: Բազկաթոռի արտաքին լայնքը (բռնակից բռնակ) պետք է լինի 60-65սմ: Նստատեղի զրոյական դիրքում՝ նստատեղից մինչև թիկնակի վերին հատված բարձրությունը պետք է 70-75սմ լինի, գետնից մինչև նստատեղ՝ 55-60սմ, իսկ գետնից մինչև թիկնակի վերին հատված բարձրությունը՝ պետք է լինի 120-125սմ : Այլ պայմաններ. * Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը, հավաքումը իրականացնում է Մատակարարը: ** Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր՝ չօգտագործված: *** Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից առնվազն 365 օրացուցային օր: ****Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին օգտագործումը պարունակում է նաև «կամ համարժեք» բառերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Леван ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/12 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	